Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

103

Հրատարակություն
„Արծուի“

ԹՈՄԱՍ ԲՕՑԱՐԻՍ

8
Թ-75

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“
1904

1083

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ԱՐԾՈՒԻ“

8
Թ-75
Ա.Գ.
№ 1. 378

ԹՈՄԱՍ ԲՕՑԱՐԻՍ

(ՋԵԳՐԻՏՏ ԱԼՅԵՔ)

Հայոց
Հռիփսիմեան Դպրոց
Էկեղ.-Ժխակ. (երիտասարդաց)

1001
ԱԳԱԿ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հանրային Գրադարան
Публичная Библиотека
1922
именна. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“
1904

2003

2011

30899-42

Дозволено Цензурою С.-Петербургъ, 9-го Ноября 1904 г.

8
14095-58

ԹՈՄԱՍ ԲՕՅԱՐԻՍ

Բագուի Հայոց
Հոգեւոր Դպրոց
Գ.-ժամակ. (օրիորդաց)

I.

Քանի եղնից մօտ 500 տարի առաջ, երբ տաճիկները յունաց (բէրդէնների) կայսրութեան մեծ մասին տիրել էին և սպառնում էին Ստամբոլն էլ տիրել, յունական Արրիպեղագոս կոչուած մանր կղզիներից մէկի վրայ յետագայ անգրը պատահեց։

Մի յոյն քահանայ մանատուփը ձեռքին, հանդստեան աղօթքներ կարդալով անցնում

էր մի փոքրիկ բաղաքի ազքատ փողոցի միջով։ Անցնող դարձողը բարեպաշտութեամբ գտակը հանում, մօտենում էր նրան՝ աջը համբուրելու։

Քահանան կանգ առաւ մի գծուծ տան առջև. դուռը բացուեց, նա ներս մտաւ. ներս մտան և մի քանի առատաձասէր մարդիկ։ Նրանց ներս մտած սենեակը փոքրիկ էր, միջի կահ կարասիքը հին և մաշուած, որ պարզ ցոյց էր տալիս բնակուողների ազքատութիւնը։ Հին տախտի վրայ պարկած էր մի հիւանդ կին։ Նրա նիհար և կապտած երեսի վրայ յայտնի երևում էր մահուան տագնապը. հիւանդը մեռնելու մօտ էր։

Երբ քահանան մօտեցաւ հիւանդին նրա վրայ վերջին ծէսը կատարելու, կինը իր ծանրացած արտևանունքները բարձրացրեց, ճիգ արեց անկողնի մէջ նստելու, ձեռքը մեկնեց դէպի տան մի անկիւնը և նշանացի կանչեց իր զաւակներին, որոնք լացակրկնած մի անկիւնում կանգնած էին և խեղճ-խեղճ նայում էին իրանց հիւանդ մօրը։ Նրանցից մինը տասնեհինգ տարեկան մի պատանի էր, միւսը երկու տարով փոքր մի աղջիկ։ Տղան ու աղջիկը շտապով վազեցին մօր անկողնի մօտ,

ապիսպորմ լացով չոքեցին հիւանդի առաջ և այդպէս մնացին, մինչև քահանան իր տխուր արարողութիւնը վերջացրեց։ Երբ որ քահանան հիւանդին խոստովանեցրեց, հաղորդեց և վերջին «Հայր մերը» ասաց, սենեակից դուրս գնաց։ Քահանայի ետևից լուռ ու մունջ դուրս գնացին և այս տխուր տեսարանի միւս հանդիսատեսները։ Մնացին սենեակում միայն մայրը և իր երկու զաւակները։

Պատանու վրայ նայողը կասէր, որ տասնըհինգ տարեկանից շատ աւել է։ Նրա լայն և գեղեցիկ ճակատը, ծածկուած խառնիխուռն ընկած երկայն ու թուխ մազերով, արտասունքով լի ժիր ու սուր աչքերը, որ կրակի պէս փայլում էին և կարծես կայծեր էին արձակում. մի խօսքով պատանու ամբողջ արտաքին կերպարանքը ցոյց էր տալիս նրա խելքը, սրտի բաջութիւնը և անվեհերութիւնը։ Պատանու անունը Թոմաս Բօցարիս էր, իսկ նորա քոյրը Հեղինէ էր կոչւում։ Հեղինէն իր գեղեցկութեամբ աննման էր. նրա երեսը ցոյց էր տալիս սրտի հրեշտակային անմեղութիւնը, իսկ թուխ մեծ և գեղեցիկ աչքերի մէջ փայլում էր նրա հեզութիւնը և խելքը։ Հեղինէի ամեն մի միտքն ու զգացմունքը պարզ երևում

էին նրա շարժուն կերպարանքի վրայ։ Ինչ որ ուրիշ մարդիկ հասկացնում են լեզուով, Հեղինէն հասկացնում էր իր աչքերով և զգայուն երեսով։ Այդպէս էլ պիտի լինէր, որովհետև Հեղինէն ի ծնէ մունջ էր. երեսի ու աչքերի զանազան արտայայտութիւններն էին խեղճ աղջկայ միակ լեզուն։

—Բօցարիս, ասաց թոյլ ձայնով հիւանդը, քո խնամքին եմ յանձնում քրոջդ. քեզանից դուրս աշխարհի երեսին նա ուրիշ տէր ու պաշտպան չունի. խոստացիր, որդիս, որ նրան անտէր չես թողնի։

—Մայրիկ, հանգիստ կաց, քեզ մի վրդովիր, պատասխանեց Բօցարիսը, երդւում եմ, որ քրոջս աչքին լոյսի պէս կնայեմ։

—Ադրես, որդիս, իմ յոյսը դու ես։ Այս որ ասաց, Բօցարիսի և Հեղինէի ձեռքերը առաւ իւր ձեռքի մէջ և մեղմ ձայնով սկսեց մի աղօթք մրմնջալ։ Այդ րոպէին դրսից դուռը բարձր ծեծեցին. կարծես ուզում էին դուռը ջարդել։ Բօցարիսը շտապով տեղից վեր թռաւ, գնաց դուռը բացեց։ Դուռը բացուելուն պէս ներս թափուեցին չորս հինգ հոգի տաճիկ հարկահաններ, տան մէջ մեծ աղմուկ բարձրացին և հայհոյելով պահանջեցին այն

նոր հարկերը, որ սուլթանը դրել էր իր տիրած երկիրների վրայ։ Բօցարիսը ցոյց տալով իր մօր վրայ, աղաչում, պաղատում էր չվրդովել նրա կեանքի վերջին րոպէները. բայց իզուր. նրա աղաչանքն ու պաղատանքը չկարողացան այդ անօրէնների մէջ մի կաթիլ գութ շարժել։

—Ախչայ, ախչայ, (փող, փող) կրկնում էին նրանք անդադար, թէ չէ տան մէջ ինչ կայ, չկայ, կ'ժողովենք, կ'տանենք։

—Մայրս երկար ժամանակ հիւանդ էր, ունեցած չունեցածներս նրա վրայ ենք ծախսել, ասում էր Բօցարիսը, աղաչում եմ, միայն մի երկու օր սպասէք, պարտքս կըհատուցանեմ։

—Շատ զահլայ մի տար, դ ա վ ո ւ ր (անհաւատ), փող, ոսկի, թանկագին բան ունիս, տուր, թէ չէ, ինչ ես երկար դլխիցդ դուրս տալի... Տաճիկներն էլ երկար չնայեցին. ինչ որ տան մէջը կար, կողոպտեցին. վերջը սկսեցին հոգեվարքի մէջ եղած հիւանդի տակից անկողինը դուրս քաշել... Էլ Բօցարիսի սիրտը չդիմացաւ, յուսահատուած ու կատաղած յարձակուեց անօրէնների վրայ։ Տաճիկների վայրենութիւնը կրկնապատկուեց. նրանք առ այժմ

թողած իրանց կողոպուտը, բոլորը միասին յարձակուեցին խեղճ պատանու վրայ և թշուառ մայրը վերջին անգամ տեսաւ իւր որդուն կիսակենդան տաճիկների ոտի տակ։ Հիւանդ մօր սիրտը չ'դիմացաւ այս տեսարանին. վերջին անգամ մի յուսահատ շարժում արեց, ճչաց և տեղն ու տեղը հոգին աւանդեց։

Այսպէս մի մայր էլ աղատուեց իր դառնութիւններով և վշտերով լի կեանքից և տաճիկները չ'մոռացան նրա կեանքի վերջին բոպէներն անգամ թունաւորել և գուցէ նրա մահը մի քանի ժամով արագացրին։

Տաճիկները թողեցին պատանուն, շարունակեցին իրանց կողոպուտը. ինչ կար չ'կար, բոլորը ժողովեցին դուրս գնացին, թողեցին միայն տախտը, որի վրայ ընկած էր մեռած մօր դիակը, իր կիսակենդան որդուն և սարսափահար աղջկանը։

Տաճիկների հեռանալուց մի քիչ յետոյ պատանին ու նրա քոյրը ուշքի եկան, հեկեկալով ընկան իրանց մօր անշնչացած դիակի վրայ և երկար ժամանակ այդպէս մնացել էին։ Տխրութիւնն ու յուսահատութիւնը նրանց ամեն բան մոռացրել էր։ Առաջինը Բօցարիսը ուշքի եկաւ, վեր կանգնեց. նայեց չորս կողմը,

աչքին ընկաւ իրանց կողոպտած տան չորս մերկ պատերը։ Յիշեց քիչ առաջ տաճիկների արած բարբարոսութիւնը, նայեց իր կապտած մօրը, որի երեսին կարծես դեռ երևում էր այն սարսափը, որ ազդել էին նրա վրայ տաճիկները հոգեարքի մէջ։ Մի ակնթարթում Բօցարիսի յուսահատ վիշտը փոխուեց անասելի կատաղութեան։ Նրա սիրտը լցուեց կատաղի ատելութեամբ դէպի տաճիկները և աչքերը փայլեցին վրէժխնդրութեան հոգով։ Դարձեալ նա մօտեցաւ իր անկենդան մօրը, բայց այս անգամ ոչ թէ խեղճ-խեղճ լաց լինելու և արտասուք թափելու, այլ իր սիրած և պաշտած դիակի վրայ երդուելու, որ ինքը այսուհետև պիտի ապրի միայն վրէժխնդրութեան համար, որ իր կեանքը պիտի զոհի իր հայրենիքի և դժբախտ ու հալածուած ազգի համար։ «Դուք մեր գեղեցիկ հայրենիքը ոտնակոխ արեցիք և մեր ազգը գերեցիք, բարձրաձայն աղաղակում էր Բօցարիսը. տուն, ընտանիք, եղեղեցի, ամեն տեղ մտար, ապականեցիք. երդւում եմ առաջի Աստուծոյ, երդւում եմ և մօրս անունովը, որին դուք վշտամահ արեցիք, քանի կենդանի եմ, ես ձեզնից իմ վրէժս կ'առնեմ...»։

II.

Այս դէպքից յետոյ անցաւ մի տարի։ Թոմասը մօրը տուած խօսքը ճշտիւ կատարեց։ Որքան կարողանում էր, խնամք էր տանում Հեղինէի վրայ։ Թոմասի միակ հոգսը Հեղինէն էր, որովհետև ինքը նրա համար համ եղբայր էր, համ հայր, համ մայր, Հեղինէն ոչնչով յետ չէր մնում իր եղբօրից։ Նրանք երկուսը միմեանց այնքան էին սիրում, որքան քոյր և եղբայր կարող են միմեանց սիրել։ Բօցարիսը ձկնորս էր. ամեն օր ձուկ էր որսում, տանում էր շուկայում ծախում։ Երեկոյեան մօտ, երբ որ օրուայ աշխատանքից դադրած տուն էր վերադառնում, առնում էր հետը Հեղինէին և երկուսով գնում էին ծովի ափը խտակ օդ շնչելու։ Ծառի զովարար ստուերի տակ նստած Թոմասը ուրախ-ուրախ նայում էր քրոջ երեսին և աշխատում էր նրա ամեն մի միտքը և խորհուրդը իմանալ և նորան մխիթարել։ Բայց միշտ Բօցարիսի սիրտը հանգիստ և ուրախ չէր լինում։ Յաճախ պատահում էր, որ նրա դէմքը մռայլում էր և աչքերը կրակի պէս փայլատակում էին։ Այդ րոպէներում նա

յիշում էր իր երդումը, յիշում էր տաճիկների յափշտակութիւնները, աւազակութիւնները և բռնութիւնները, որոնք արդէն ամեն չափ ու սահման անց էին կացել։ Նա տեսնում էր, քանի իրենք լուռ են մնում, քանի ձայն չեն հանում, այնքան տաճիկների լուծը օրէցօր ծանրանում, անտանելի է դառնում։ Իրենց կանանց և աղջիկներանց անպատուում են, ունեցածները ձեռքներից խլում և իրանց սոված ու անապաստան են թողնում. իրանց հաւատն ու եկեղեցին պղծում են, և այս բոլորը իրանք աչքերը բաց տեսնում են ու տանում, յոյսը դնելով սրա նրա վրայ, որ մի օր կ'գան, իրանց կ'ազատեն...

Հեղինէն աչքերից ու երեսից տեսնում էր եղբօր սրտի մէջ կատարուածը և աշխատում էր նրան հանգստացնել։

Այդպիսի րոպէներում Բօցարիսը ձեռքը կոկորդին էր դնում և իր մունջ քրոջը այդ նշանով հասկացնում, որ համբերութիւնը մինչև կոկորդն է հասել, որ մեռնելը հազար անգամ լաւ է այդպիսի կեանքից...

III.

Բօցարիսը շարունակում էր իր պարապմունքը և քոյր ու եղբայր մի կերպ ապրում էին և օրերը անց կացնում։

Մի օր շուկայում Բօցարիսը սովորականից աւելի տխուր էր. մի նախադգացում կարծես նրան անհանգստացնում ու վախեցնում էր։ Նա իր ձկները թանգ-էժան մի կերպ շուտով ծախեց և շտապում էր տուն գնալ։ Հեղինէն սովորութիւն ունէր՝ ամեն օր եղբօր վերադարձին դիմաւորում էր նրան տան դռան առաջ, բայց այսօր նա չերևաց։ Բօցարիսի սիրտը սկսեց արագ-արագ խփել. նա քայլերն արագացրեց և շտապով ներս մտաւ. տան դուռը բաց էր, բայց ներսը ոչ ոք չկար։ Թոմասը այս ու այն կողմը գնաց, ամեն անկիւն նայեց, ձայն տուեց, աղաղակեց, քոյրը չկայ ու չկայ։ Յանկարծ Թոմասի աչքովն ընկաւ մի չամայ[1]), որ ընկած էր գետնին, տան դռան մի կողմը։ Թոմասը զժուռածի պէս դուրս եկաւ փողոց, հարևաններից հարցրեց և իմացաւ, որ ղաղիի[1]) ծառաները իրան քրոջը զոռով փախցրել տարել են նրա հարեմը։

Այս լուրը որ իմացաւ, Թոմասը լաց չեղաւ, գլուխը չթափեց, ինչպէս սովորաբար անում են վախկոտ ու թուլասիրտ մարդիկ, այլ մի բոպէ լռեց և տեղն ու տեղը քարացածի պէս մնաց. կարծես մի տեսակ ապշութիւն եկաւ նորա վրայ. յետոյ բոլորովին հանդարտ, բայց բարձր ձայնով ասաց իրեն շրջապատող մարդկանց, որոնք աշխատում էին նրան մխիթարել. «Ճաճիկները մեղաւոր չեն, որ մեր կանանց ու քոյրերին յափշտակում են, ունեցածներս ձեռքներիցս խլում. մեղաւորը մենք ենք, մենք, որ այդ բոլորը տեսնում ու տանում ենք. մինչև մենք էլ չլինենք, մեզ չեն բառնայ։ Ինչի համար էր ապրում, ողորմելիս, ասում էր դառնութեամբ Թոմասը իրեն մօտ ժողոված բազմութեանը, որ դուք դատէք, տաճիկն ուտի, որ դուք սաղ օրը չարչարուէր, տաճիկը քէֆ անի, որ բեռնակիր անասունի պէս տաճկին ծառայէր, նրա ծառան, նրա ճորտը լինէր...».

—Խեղճ տղէն ցնդել է, դարդիցը խելքը

[1]) Տաճիկների գլխի փաթեթ։

[1]) Ղաղին մահմեդականների հոգևոր դատաւորն է։

կորցրել է, ասում էին մի քանի ծերացած մարդիկ, որ մի քիչ հեռում կանգնած լսում էին Բօցարիսին։

—Չէ, ցնդած չի, բայց դեռ ջահիլ է, արիւնը տաք է. դրա ջուրը դեռ դար ի վեր է գնում, գլուխները մմրտմբացնելով պատասխանում էին մի երկու ծերեր։

—Եղբայրք, սա վտանգաւոր մարդ է, շուտով հեռանանք, թէ չէ տաճիկները որ իմանան, մեր տունը կը քանդեն, մեզ տնով տեղով կը կորցնեն, քշփշում էին Թոմասին շրջապատողներից մի քանիսը։

—Դրուստ էք ասում, հաստատում էին ուրիշները, գնանք, գլուխը փրկը, Թող իրան նմաններին գտնի ու ինչ ուզում է, անի, մենք դրա հետ գործ չ'ունենք։

Այսպէս կամաց-կամաց բոլորը թողեցին, Թոմասից հեռացան. մնացին միայն Թոմասի ընկերներից մի քանի ջահիլ տղերք. դրանք էլ քաշուեցին մի մի անկիւն և երկար ժամանակ միմեանց մէջ խօսում էին։ Թոմասի ընկերների թիւը օրէցօր շատանում էր։ Այս անցքից յետոյ էլ անցաւ բաւական ժամանակ։ Տաճիկները իրանց արածը շարունակում էին և դժգոհների թիւը օրէցօր աւելանում էր. դժգոհների թիւի հետ աւելանում էր և Թոմասի ընկերների թիւը։

Այժմ Թոմասը սովորաբար ուրախ և զուարթ էր լինում, կարծես սկի նրա քրոջը չէին փախցրել։ Ընդհակառակը տաճիկների նոր-նոր գազանութիւնները Թոմասին և նրա ընկերներին աւելի ուրախացնում էին. իրանց թիւը քանի գնում շատանում էր...

IV.

Մեծահանդէս տօն էր. յունաց փոքրիկ քաղաքի փողոցներն ու հրապարակները խուռն ամբոխով լիքն էին։ Այդ օրը մերձակայ գիւղերից էլ շատ գիւղացի երիտասարդներ եկել էին քաղաք։ Բօցարիսի ընկերները խումբ-խումբ զբօսնում էին քաղաքի փողոցներում։ Երևում էր, որ մի բան նրանց անհանգստացնում է, մի բանի նրանք անհամբեր սպասում են։ Երիտասարդների մի խումբ էլ, որի մէջն էր Բօցարիսը, շրջում էր այն փողոցում, ուր գտնւում էր զադիի տունը։ Յանկարծ լսուեց. «ճանապարհ, ճանապարհ, հեռու գնացէք ճամբի մէջտեղից». եկողը զադին էր, ձի հեծած,

յետևիցը մի քանի ծառաներ գցած։ Որովհետև փողոցը շատ նեղ էր, բոլոր ժողովուրդը քաշուեց պատերի տակը և շարքով կանգնեց. Թոմասի ընկերները խառը նրանց մէջ կանգնած էին։ Ղադին անցնելիս երկու կողմից ժողովուրդը ձեռքը ճակատին դնելով և գլուխը մինչեվ գօտին խոնարհեցնելով լուռ ողջունում էր։ Ղադին յաճախակի գլուխը քիչ կռացնելով պատասխանում էր ժողովրդի խոնարհ ողջունին։ Յանկարծ կողքից կայնի մի ուժեղ հարուած իջաւ ղադիի գլխին. ձին խրտնեց, կանգնեց երկու ոտների վրայ և արիւնաշաղախ ու անկենդան ղադին ընկաւ ձիու ոտների տակ։ Նոյն վարկեանին յանկարծ կացնի և դաշոյնի հարուածներ տեղացին ղադիի ծառաների վրայ, որոնցից մի երկուսը սպանուեցին, միւսները ձին քշեցին փախան։ Ժողովրդի մէջ սարսափ տարածուեց։ «Սատկացրէք այդ անօրէններին», գոռում էր Բօցարիսը աչքերը կարմրած և արիւնոտ կայինը վերև բարձրացրած։ Նշանը տրուեց. Թոմասի ընկերները քաղաքի զանազան մասերում հանեցին շորերի տակ պահած կայիններին, որովհետև քրիստոնեաներին խստիւ արգիլուած էր ուրիշ զէնք պահել, և պատահած տաճկին խփում,

սպանում էին։ Յարձակումը այնպէս անակնկալ և յանկարծակի էր, որ տաճիկները ահից ու սարսափից գլխները բոլորովին կորցրել էին և ամեն մարդ միայն իրան գլխի ճարն էր տեսնում։ Իրարանցումն ընկաւ քաղաքի մէջ. մեծ, փոքր, ծեր, երեխայ իրար էին խառնուել։ Տաճիկները առանց իմանալու ով է իրենց իսկական թշնամին, յարձակւում էին ամեն մի պատահած քրիստոնէի վրայ։ Այդպիսով Թոմասի ու նրա ընկերների սկսած գործը ընդհանրացաւ։ Բոլոր յոյները այնպէս միաբան յարձակւում էին տաճիկների վրայ, որ կարծես առաջուց խօսք էին կապել ու պատրաստուել։ Երեկուայ վախկոտը ու թուլասիրտը այսօր առիւծ էր կտրել։ Դարևոր տառապանքն ու նեղութիւնները այժմ նրանց սրտի մէջ փոխուել էին կատաղի վրէժխնդրութեան։ Ամեն մարդ մի վրէժ ունէր տաճկից լուծելու։ Շատերն էլ կային, որ միմիայն անձնապաշտպանութեան համար էին կռւում. որովհետև տաճիկները իրանց վրայ էին յարձակւում, իրանք էլ ստիպուած էին նրանց վրայ յարձակուել։ Թոմասի ընկերները խառն ի խառն չէին կռւում, այլ մի-մի մարդու առաջնորդութեամբ բաժանուած էին զանազան խմբերի,

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
1001 / 14095-58

որոնց հետ միացել էին և ժողովրդից շատերը, իսկ տաճիկները երկիւղից ցիր ու ցան եղած, կամ փախչում էին, կամ տներում փակուած պաշտպանւում էին, և կամ այստեղ այնտեղ առանձին կռւում։ Տաճիկների այդ թոյլ դիմադրութիւնը երկար չտևեց. տների մէջ փակուածներին կրակ տուին և այրեցին, կամ ծխով խեղդեցին, իսկ միւսներին բոլորովին կոտորեցին։ Ի հարկէ քիչ մարդ չ'կոտորուեց և բրիստոնեաներից։

Ամբոխը, քաջալերուած այս յաղթութիւնով, յարձակուեց զադիի և միւս տաճիկ մեծամեծների տների վրայ, քանդեց, հիմնայատակ արեց, նրանց բոլոր հարստութիւնը կողոպտեց, Հեղինէին էլ ազատեց ու յանձնեց եղբօրը։ Պէտք էր տեսնել Հեղինէի ուրախութիւնը, երբ իրան ազատուած զգաց այդ հարէմ կոչուած դժոխքից։ Տաճիկ զադիից անպատուած ու անարգուած, խեղճը կիսամեռ տուն դարձաւ։ Բայց միայն Հեղինէն չէր այդ վիճակի մէջ. ուրիշ շատ աղջկերք, Հեղինէից առաջ և յետոյ, նոյն օրին էին արժանացել. այսօր բոլորն էլ ազատուեցին իրանց անպատիւ դրութիւնից։ Շատ անմխիթար հայրեր, մայրեր և եղբայրներ վերջապէս արժանացան իրանց

անպատուած աղջիկներին ու քոյրերին տեսնելու...

Քաղաքում պատահած տաճիկների կոտորածը կայծակի արագութեամբ տարածուեց ամբողջ կղզու մէջ։ Բոլոր գիւղերն էլ սկսեցին հետևել քաղաքի օրինակին։ Ամեն տեղ տաճիկներին քշեցին. նրանք իրանց կայքը, տունը, տեղը թողած նաւերով ու նաւակներով մի կերպ կղզուցը փախան ու իրանց գլուխը պրծացրին։ Շատ անգամ փախչողների քամակիցը հասնում էին և բոլորին թափում ծովը խեղդում։ Այսպէս կռիւն ու կոտորածը տևեց մօտ մէկ շաբաթ, մինչև որ տաճիկների հոտը կղզուցը համարեա կտրուեց։ Միայն այն տաճիկները մնացին, որոնք սկզբից կամովին անձնատուր եղան և ընդունեցին քրիստոնեաների իշխանութիւնը, նրանց բրիստոնեաները ձեռք չ'տուին։

V.

Տաճիկների իշխանութիւնը բնաջինջ եղաւ. յոյները իրանք դարձան իրանց երկրին տէր ու իշխան։ Ում տունն էին խլել, անտուն

թողել, տան տէր դարձաւ. ում հողից էին զրկել, այդին կամ պարտէզը ձեռքից խլել, իրան կալուածքը յետ ստացաւ։ Շատ մարդիկ, որոնք իրանց պատիւը կամ կայքը պաշտպանելու համար խոր ու մութ բանտերում տանջւում էին, այժմ ազատուեցան ու լոյս աշխարհ տեսան։ Բոլորի ուրախութիւնը չափ ու սահման չկար. վերջապէս կարողացան մի ազատ շունչ քաշել։

Այդ ժամանակ Բօցարիսն ու իր խումբը անգործ չէին։ Նրանք շատ լաւ գիտէին, որ շուտ-ուշ տաճիկները նոր ուժով կ'գան և կ'աշխատեն կրկին նորից տիրել, և եթէ տիրեցին, այն ժամանակ վայ իրանց։ Բօցարիսը իր ընկերների ու ժողովրդի համաձայնութեամբ ընտրուեց ժամանակաւոր կառավարիչ։ Նրան անսահման իրաւունք տուեցին ամեն բան իր ուզածի պէս կարգադրելու։ Ամենքը հաւատում էին նրա խելքին, ազնութեանը ու քաջութեանը։ Այսպէս 16 տարեկան Բօցարիսը դարձաւ հեկրի կառավարիչ լիազօր իրաւունքներով։

Բօցարիսի առաջին գործն եղաւ իրան հին ընկերներից կանոնաւոր զօրք կազմել և նրանց թիւը քանի կարելի է շատացնել։ Բո-

ցարիսը դրանով էլ չ'բաւականացաւ. զէնքեր պատրաստել տուեց, բաժանեց բոլոր ժողովրդին զէնք գործ ածել սովորեցնեն։

Տաճիկներն էլ պարապ չէին. հեշտ բան չէր նրանց համար այդպիսի դեղեցիկ և հարուստ երկիր կորցնել։ Նրանք պատերազմական մեծ մեծ նաւեր պատրաստեցին, բազմաթիւ զօրքով լցրին, որ գնան կրկին նորից տիրեն և ապստամբներին չարաչար պատժեն։

Երբ որ թշնամու նաւատորմը մօտեցաւ կղզուն և տաճիկները ցամաք դուրս եկան, յոյները առաջուայ պէս անպաշտպան չէին. նորակազմ զօրքը Բօցարիսի առաջնորդութեամբ տաճիկների դէմն ելաւ իրանց հայրենիքն ու ազատութիւնը պաշտպանելու։ Նրանք բոլորը առաջինից մինչև վերջինը վրճռել էին մեռնել իրանց հայրենիքը պաշտպանելու համար։ Քրիստոնեաների այդ հաստատ վճռողականութիւնը արդէն տաճիկների ականջն էր հասել և նրանց սրտի մէջ երկիւղ էր ձգել։ Նրանք սովորել էին դալ յոյներին ոչխարների պէս մորթել և սկի չէին սպասում այդպիսի բան։ Մի քանի փոքրիկ ընդհարումներ արդէն պատահել էին տաճիկնե-

րի և յոյների մէջ և տաճիկները այնպիսի կատաղի դիմադրութիւն տեսան, առաջ երազում էլ չէին տեսել. այդ բանը տաճիկների սրտի մէջ աւելի ահ գցեց, իսկ յոյներին զօրացուցեց։ Բօցարիսը չմոռացաւ, որ իր զօրքի ոգևորութիւնը անցնի. նշան տուեց առաջ գնալ և յարձակումը սկսել. առաջին օրինակը ինքը տուեց։ Տաճիկները առաջին անգամն էին տեսնում այդպիսի համարձակութիւն, որ քրիստոնեաները առաջինն են իրանց վրայ յարձակւում։ Քրիստոնեաների յարձակումը այնպէս միաբան և ուժգին էր, որ տաճիկները սկսեցին յետ-յետ գնալ. այդ նկատեցին յոյները և իրանց յարձակումը սաստկացրին. արդէն բոլորը խառնուել էին միմեանց։ Տաճիկները սկսեցին փախչել և ոչ մէկին կենդանի չէին թողնում, ումը հասնում էին, անխնայ սպանում էին։ Տաճիկներից քչերը կարողացան իրանց գլուխն ազատել և նաւ նստել փախչել։

VI.

Երբ որ Սուլթանը լսեց իր զօրքի պարտութիւնը քրիստոնեաներից, շատ զայրացաւ։ Նա հաստատ վճռեց աւելի մեծ զօրք ուղարկել այդ կողմն, որ գնան ապստամբ յոյներին տիրեն և նրանց, մեծից մինչև փոքրը, սրի բերանը քաշեն։ Մինչդեռ Սուլթանը պատրաստութեան վրայ էր, լուր հասաւ նրան, որ մի ուրիշ աւելի վայրենի ազգ, թաթարները, իրանց Լանկ-Թամուր թագաւորի առաջնորդութեամբ մտել են Սուլթանի երկիրները և որտեղից անցնում են, անապատ են դարձնում։ Այս անցքը պատահեց մեզանից մօտ 500 տարի առաջ, երբ տաճիկներին իշխում էր Բայազէտ Սուլթանը։ Բայազէտի կռիւը Լանկ-Թամուրի հետ անյաջող անցաւ. նա յաղթուեց. բոլոր զօրքը կորցրեց և ինքն էլ գերի բռնուեց։ Լանկ-Թամուրը նրան երկաթէ վանդակի մէջ դրած, ուր գնում էր, հետը ման էր ածում։ Այս պարտութիւնը տաճիկներին այնքան թուլացրեց, որ նրանք երկար ժամանակ կողմն տիրելու յոյսը բոլորովին կտրել էին։ Այսպէս շատ տարիներ անցան և յոյները այն-

քան արդէն ամրացել էին, որ ոչ մի թշնամուց էլ չէին վախենում։ Այդ բոլոր ժամանակը Բօցարիսն էր կղզու կառավարիչը, նա վաղուց արդէն իր պատանեկական հասակից մտել էր այրականը։ Բօցարիսի բնաւորութիւնը ինչպէս էր, այնպէս մնաց՝ միշտ բարի և մարդասէր, բայց իր գործերի մէջ հաստատ ու անսասան և տեղն եկած ժամանակ միշտ պատրաստ իրան զոհելու իր ազգի և հայրենիքի համար։

Այդ փոքրիկ կղզու աճելն ու զօրանալը տաճիկ սուլթանների աչքին փուշ էր դարձել, բայց ինչ անէին։ Տաճիկները արդէն փորձով տեսան, որ բրիստոնեաները իրանց ազատութիւնը պաշտպանելու համար պատրաստ են մեծից մինչև փոքրը գլխները վեր դնել։ Ուժով տիրելը այլևս շատ դժուար էր. դրա համար ևս շատ զօրք էր հարկաւոր։ Բայց ինչ որ չի կարելի զէնքով և ուժով անել, հնչուութեամբ կարելի է մատնութեամբ գլուխ բերել։ Զարմանալի բան չի, որ Բօցարիսի պէս մարդիկ իրանց նախանձողներն ու թշնամիներն ունենան։

—Երէկուայ լակոտը գայ մեր գլխին իշխանութիւն անի, ասում էին շատ սիպտակամօրուս իշխաններ. նրա հայրն ու մայրը մեր աչքի առաջ սոված զկոտում էին, հմի տղէն մեծ-թաշախուստներ է ծախում։

—Մենք նրանից պակաս մարդ ենք, ինչու ամեն բանում նա պիտի լինի առաջինը, այսպէս էին ասում ուրիշները։

—Չէ, չէ, ինքը հերիք չի, իրան նմաններին գտել գլխին է ժողովել. հէնց իմանաս իրանք են, որ կան, տչխարհում էլ ուրիշ մարդ չ'կայ . . . զանգատվում էին միւսները։

Պակաս թշնամի չէին Բօցարիսին և տէրտէրները, որոնք տեղի-անտեղի սովորութիւն ունէին ամեն գործի մէջ խառնուել, որ Բօցարիսը խստիւ արգելում էր։

—Աստուածային պատուհասներից չարագոյնը այն է, երբ անչափահաս մանկտիք են երկրի կառավարիչները. մեր պատուելի իշխանք անարգուած են, Աստուածային ողորմութիւնը մեզանից վերացել է, որովհետև ասուած է, «ի ժողովել երիտասարդաց կաքաւին գիք»։ Այսպէս էին յայտնում իրանց դժգոհութիւնը տէրտէրները։

ԼԻ.

Տաճիկներին այս բոլորը յայտնի էր. նրանք շատ լաւ գիտէին, ովքեր են Բօցարիսի թշնամիները։ Սուլթանը Բօցարիսի թշնամիներից ամեն մէկին առանձին և ծածուկ իմաց տուեց, որ եթէ մի կերպ Բօցարիսին մէջտեղից վերացնի, իրան կղզու վրայ կառավարիչ կը կարգի և շատ պարգևներ կըտայ։ Բօցարիսի թշնամիներից ամեն մէկը երազում էր, որ եթէ նրան սպանի, ինքը նրա տեղը Սուլթանից կղզու վրայ կառավարիչ կըկարգուի։ Քահանաների մատն էլ այս գործի մէջ խառն էր. նրանք կրակի վրայ իւղ էին ածում։ Բօցարիսի թշնամիներից իւրաքանչիւրը առանձին մի հնար էր մտածում նրան սպանելու։ Ակնյայտնի սպանել՝ առաջինը շատ դժուար էր, երկրորդը՝ վախենում էին. մնում էր գաղտնի սպանել կամ թունաւորել. վերջին միջոցը աւելի հեշտ էր։

Մի օր Բօցարիսը տանը չեղած ժամանակ, յոյն իշխաններից մէկը իր այգու լաւ գինիներից մի գաւ ուղարկում է Բօցարիսին նուէր։ Քոյրը, խեղճ, միամիտ աղջիկ, ինչ է

է իմանում որ դրա մէջը մի սատանայութիւն կայ, գինին ընդունում է, ուղարկողին շնորհակալութիւն է յայտնում և բերողին էլ փող է ընծայում։

Ճաշին քոյր և եղբայր, երկուսն այդ գինուց խմում են և շատ գովում։ Իսկապէս այդ գինին շատ գլուխ գինի էր։

Ճաշից վեր կացան թէ չէ, երկուսի սիրտն էլ սկսեց խառնել, գլուխը պտուտ գալ և աչքները սևանալ։ Երկուսն էլ միամիտ, չգիտէին ինչին վերագրեն իրանց յանկարծակի հիւանդութիւնը։ Յանկարծ Բօցարիսը գլխի ընկաւ, որ գինին կարող էր թունաւորուած լինել։ Ուզում էր շուտով տանիցը դուրս գալ, օգնութիւն կանչել, բայց արդէն ուշ էր. էլ չկարողացաւ ոտքի վրայ կանգնել, գնտակահարի պէս գետնի վրայ փռուեց։ Քոյրը նոյնպէս վազուց թուլացել, ընկել էր։ Նրանց աչքերը շռուեցին, բերանները փրփրակալեց և երեսը սկսեց ծռմռուել։ Բայց շատ երկար չտեսեց խեղճերի տանջանքը. երկուսն էլ շուտով մեռան. թոյնը շատ զօրեղ էր. թշնամին յաղթանակը տարաւ։

VIII.

Բօցարիսի յանկարծակի մահը ժողովրդի մէջ մեծ իրարանցում գցեց։ Բոլորը ապշած և շուարած միմեանց հարցնում էին՝ ինչպէս մեռաւ, ինչ անեն, ոնց անեն։ Ամենքի սրտի մէջ կասկած ընկաւ, որ Բօցարիսը թունաւորուած կըլինի։ Բոլորը գգում էին, սրա վերջը շատ վատ կըլինի, բայց ինչ անելիքները չ'գիտէին։ Մի վատ ճնշող նախազգացում բոլորի սիրտը պաշարել էր։ Ամենքը միմեանցից կասկածում, վախենում էին և ամեն մարդ միայն իրա գլխի վերայ էր մտածում, թէ ինչպէս որ մի փորձանքի մէջ չընկնի։ Քահանաները աշխատում էին ժողովրդին հանգստացնել և ամեն տեղ քարոզել «ինչ որ Նախախնամութիւնը տնօրինել է, այն պէտք է կատարուի. ամեն չար խորհուրդ ձեր սրտից հեռացրէք. Նախախնամութեան կամքին չ'պէտք է հակառակել. այժմ փորձիչը մտել է ձեր սրտերի մէջ. նրա չար խորհուրդներին մի լսէք, հալածեցէք նրան ձեր սրտից, գնա դժոխքի յաւիտենական կրակի մէջ տանջուի, և այլն և այլն»....

Բօցարիսի և նրա քրոջ յուղարկաւորութիւնը մեծ հանդէսով կատարուեց։ Բոլոր քահանաները զգեստաւորուած, իշխանները, բոլոր ժողովուրդը ներկայ էին և մեծ պատուով տարան թաղեցին։

Բօցարիսի մահից յետոյ ամեն իշխան ինքը ցանկացաւ նրա տեղը բռնել։ Յանկարծ մի օրուայ մէջ հինգ-վեց կառավարիչներ դուրս եկան. դրանցից ամեն մէկը իր կողմնակից մարդիկն ունէր և միւսներին չէր ուզում ճանաչել։ Բանն այնտեղ հասաւ, որ այդ ինքնակոչ կառավարիչներից ամեն մէկը միւսների դէմ կռիւ սկսեց, որ բոլորովին կոտորի, միայն ինքը մնայ։ Ժողովուրդը, զօրքը բաժան բաժան եղած միմեանց դէմ կռւում էին, յոյնը յոյնի դէմ էր դուրս եկել և միմեանց կոտորում էին։ Այս խառնակութիւնների լուրը արդէն վաղուց հասել էր տաճիկներին, նրանց ուզածն էլ հէնց այդ էր։ Տաճիկները ժամանակ չ'կորցրին և շուտով մեծ բազմութեամբ արշաւեցին կղզու վրայ։ Նրանք այլևս չ'հանդիպեցին այն միաբան և միահոգի դիմադրութեանը, որով քրիստոնեաները ստրսափ էին ազդում տաճիկներին։ Հեշտ ու հանգիստ, առանց դիմադրութեան տաճիկները կղզուն նորից տիրեցին

և սրով ու կրակով կղզու մի ծայրից մինչև միւսն անցան։ Դժուար է նկարագրել տաճիկների գործած անզթութիւնները. նրանք իրանց երկար տարիների վրէժը լիովին հանեցին և էլի չ'կշտացան։ Ամեն տեղ տարածուեց կրակ, աւեր և կողոպուտ։ Շատ բազմամարդ և չէն գիւղեր հիմնայատակ կործանուեցին և մոխիր դարձան։ Հրդեհած քաղաքների բոցն ու մուխը, կանանց լացն ու աղաղակը, երեխաների ճիչը մինչև երկինք էին բարձրանում, կարծես Աստծու ողորմութիւնը խնդրելու, բայց Աստուած անմիաբաններից ու մատնիչներից երեսը միշտ դարձնում է...



Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
Москва, Мясницкая
Ա. ՄԱՍՈՒՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Բազուի Հայոց
Հոխիսեմեան Դպրոց
(Մանուկաց. Կիսարան)

103

2013

Լոյս են տեսել՝

Վամպիրների Զոհը, Յով. Ստեփանեանի	.	5 կ.
Անպոչ Հորթը, թարգ. ,,	.	2 կ.
Սատանան թէ մամուռային ,,	.	3 կ.
Մարիա ,,	.	5 կ.

Դիմել՝ Типографія „Арорь",
Овакиму Степаняну.